ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ՝ «Երևանի հ.79 մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի սոցիալական մանկավարժի (1.0 դրույք) թափուր տեղի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

-դիմում (ձև 1), մեկ լուսանկար 3x4 չափի,

-կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),

-անձը հաստատող փաստաթուղթ,

-աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից կամ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),

-ինքնակենսագրություն (ձև 4),

-այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

-ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,

-հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

-որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ: Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և վերադարձնում բնօրինակները: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են 2025թ. փետրվարի 11 -ից մինչև մարտի 10-ը **ներառյալ**, ամեն օր՝ ժամը 10:00-17:00, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2025թ. մարտի 13-ին՝ **ժամը 11.00-ին**, «Երևանի հ.79-մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ում, հասցեն՝ ք.Երևան,Գ.Շերամի 65/2:

Տեղեկությունների համար զանգահարել 010727951 կամ +37493055430 հեռախոսահամարներով: